ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության սոցիալական աջակցության բաժնի վարիչի /ծածկագիր 64-3.1-3/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Բաժնի վարիչի հանձնարարությամբ ներկայացնում է առաջարկություններ սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ, հայտնաբերում և հաշվառում է սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին և ընտանիքներին, պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը, ներկայացնում է առաջարկություն տվյալ ընտանիքին սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ, պաշտպանում է սոցիալական աջակցություն ստացողի իրավունքներն ու օրինական շահերը, ապահովում է սոցիալական աջակցություն ստացողի ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունն իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը՝ զարգացնելով սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը), գնահատում է սոցիալական աջակցություն ստացողի կարիքները

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձի չափը՝ 175932 /մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր երեսուներկու ՀՀ դրամ/

Թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության տեղեկատու վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր՝ 64-3.2-11/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Բաժնի վարիչի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները, աջակցում է իր սպասարկման տարածքում բնակվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցության իրավունքի իրականացմանը, ապահովում է իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական նպաստ կամ այլ դրամական վճար (այսուհետ՝ նպաստ) տրամադրելը, ինչպես նաև տեղեկատվական ենթահամակարգերում ընտանիքների (անձանց) մասին ամրագրված տվյալների հավաստիությունը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք է տալիս նպաստի նշանակման համար քաղաքացիների կողմից ներկայացված դիմումներին, սահմանված կարգով և ժամկետներում փոփոխություններ է կատարում ընտանիքի սոցիալական անձնագրում.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձի չափը՝ 150799 /մեկ հարյուր հիսուն հազար յոթհարյուր իննսունինն ՀՀ դրամ/

Թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության տեղեկատու վերլուծական բաժնի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 64-4.3-17/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Բաժնի վարիչի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում մասնակցում է սոցիալական աջակցություն ստանալու

նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները ստուգելու աշխատանքներին, մասնակցում է իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ սոցիալական ծառայություններ տրամադրելու աշխատանքներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է նպաստի նշանակման համար քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների քննարկման աշխատանքներին, մասնակցում է ընտանիքի սոցիալական անձնագրում սահմանված կարգով և ժամկետներում փոփոխություններ կատարելու աշխատանքներին

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձի չափը՝ 82675 /ութսուներկու հազար վեցհարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ/

Թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության տեղեկատու վերլուծական բաժնի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 64-4.3-18/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Բաժնի վարիչի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում մասնակցում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները ստուգելու աշխատանքներին, մասնակցում է իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ սոցիալական ծառայություններ տրամադրելու աշխատանքներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է նպաստի նշանակման համար քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների քննարկման աշխատանքներին, մասնակցում է ընտանիքի սոցիալական անձնագրում սահմանված կարգով և ժամկետներում փոփոխություններ կատարելու աշխատանքներին

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձի չափը՝ 82675 /ութսուներկու հազար վեցհարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ/

Թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության սոցիալական աջակցության բաժնի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 64-4.3-19/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Բաժնի վարիչի հանձնարարությամբ ներկայացնում է առաջարկություններ սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ, սոցիալական աջակցություն հայցող անձին օգնում է հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը, միջոցներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և աջակցում նրանց դիմելու տարածքային մարմնին, պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը, ներկայացնում է առաջարկություն տվյալ ընտանիքին աջակցություն տրամադրելու վերաբերյալ, մասնակցում է Բաժին դիմած բոլոր անձանց համար սոցիալական ծառայությունների, այդ թվում՝ նպաստի տրամադրման համար հավասար պայմանների ապահովման աշխատանքներին.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- Աշխատավարձի չափը՝ 82675 /ութսուներկու հազար վեցհարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ/

Թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Վերը նշված պաշտոնները կարող են զբաղեցվել՝ տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.
3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.
4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին՝

* գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
* անձնագրի պատճեն,
*կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճեն (պատճենները),
* աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),
* արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
* մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով (gegharquniq.andznakazm@mta.gov.am)՝ ներկայացնելով անձնագիր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7) անձնակազմի կառավարման բաժին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել անձնակազմի կառավարման բաժին 060650626 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 10.08.2018թ.:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
պարոն Սևակ Խլղաթյանին

..... ից
դիմողի անուն հայրանուն ազգանունը

.....
դիմողի գրանցման հասցեն

.....
դիմողի հեռ. (աշխատանքային, բնակ., բջջ.)
.....
անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ Խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով ինձ նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 64-3.2-21) թափուր պաշտոնում:

Հայտնում եմ,որ

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

(ունեմ, չունեմ)

2.Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վորդ, Էքսել, Աքսես և այլն)

---

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ

(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4.ՀՀ Կատավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններկց որևէ մեկով

(տառապում եմ, չեմ տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացառությամբ գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

(իրականացնում եմ, չեմ իրականացնում)

6. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ ----------

(զբաղվում եմ, չեմ զբաղվում)

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

(գտնվում եմ, չեմ գտնվում)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փասթաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու մասին:

Դիմող՝ ---------- ----------

ստորագրություն անուն,ազգանուն

<<------->> ----------2018 թ.